

# ԼՈՒՍԱՐԴԱՅԱԿ

Նոյեմբեր, 2007 թ. թիվ 13 (4539)

## 2008թ. ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՆԴՈՒՈՒՄ

ԿԸՂ-ի որոշմամբ Հայաստանի երրորդ հանրապետության նախագահական հինգերորդ ընտրությունները կկայանան 2008 թ. փետրվարի 19-ին: Քաղաքական դաշտում առկա կուսակցական բազմազանությունը նկատի ունենալով կփորձենք մեր թերթի էջերում ընթերցողներին պարբերաբար ներկայացնել հանրապետությունում գործող և Սպիտակու լա տարածքային կառույցներ ունեցող քաղաքական ուժերին ու նրանց գործունեությունը: Այդ նպատակով հանդիպեցինք ու գրուցեցինք Հայաստանի հանրապետական կուսակցության Սպիտակի տարածքային կազմակերպության խորհրդի նախագահ **Հովհաննես Սահակյանի** հետ.



մտածելակերպ է. որը թո արյան ու եռայան մեջ է: ՀՀ-ն Հայաստանի երրորդ հանրապետությունում գրանցված առաջին քաղաքական ուժն է: 1991թ. հիմնադրել է Աշոտ Նավասարդյանը: ՀՀ-ն ազգայնական-պահպանողական կուսակցություն է, գաղափարախոսության հիմքում ընկած է Գարեգին Նժդեհի ցեղակոնության ուսմունքը:

2007թ. նոյեմբերի 10-ին կայացավ ՀՀ-ի 11-րդ համագումարը, որտեղ կուսակցության նախագահ ընտրեցին Սեթ Սարգսյանին, նաև որոշեցին 2008-ի նախագահական ընտրություններում առաջադրել Ս. Սարգսյանի թեկնածությունը: Սա կարևոր որոշում է կուսակցության համար, քանզի առաջին անգամ է մասնակցում նախագահական ընտրություններին սեփական թեկնածուով: 1991թ. Աշոտ Նավասարդյանը մասնակցել էր նախագահական ընտրություններին, բայց ոչ թե կուսակցության առաջադրությամբ, այլ ստորագրահավաքի արդյունքում:

Առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի մոտից քաղաքական ասպարեզ վերադառնալու մասին և Հովհաննես Սահակյանը ներկայացրեց իր մտտեցումը.  
- Լևոն Տեր-Պետրոսյանը՝ իբրև երրորդ հանրապետության առաջին նախագահ, ինձ համար, իր զսպվածությամբ արժանի էր ամենայն հարգանքի: Երկիրը զարգացնելու ամենամեծ հնարավորությունը տրված է եղել իրեն, սակայն իր ղեկավարած տարիներին սխալ և ոչ ռեալ քաղաքականության հետևանքով քայքայվել է երկրի տնտեսությունը ու քաղաքական դաշտը, ուստի այսօր մա քարոսական իրավունք չունի հանդես գալ ժողովրդի առջև կամ քննադատել որևէ մեկին: Իմ կարծիքով հայ ժողովուրդը խոհեմ կլինի և միայն դարաբաղյան խնդրի կարգավորման հարցը նկատի առնելով՝ կմերժի նման քաղաքական մտտեցումը: Ժողովուրդը խելացի է և կարողանում է ճիշտ որոշումներ կայացնել:

Նախագահական քարոզարշավի ընտրամարտին առջևում է, և մենք դեռ առիթ կունենանք ընթերցողներին ներկայացնել առաջադրվող մյուս թեկնածուներին և:

Ներկայացրեց Վանուհի Ավուջանյանը



- Հանրապետականի գաղափարակիցն ու գործողությունների ակտիվ մասնակիցն են եղել 1998-ից սկսած, բայց կուսակցությանն անդամագրվել են 2001թ. ընդգրկվելով երիտասարդական թևում: 2005թ. ընտրվել են Սպիտակի տարածքային կազմակերպության խորհրդի նախագահ: Ա/թ հոկտեմբերի 29-ին տեղի ունեցան ՀՀ-ի Սպիտակի տարածքային կազմակերպության խորհրդի նախագահի և տեղակալի ընտրություններ, դարձյալ վերընտրվել են խորհրդի նախագահ: Հանրապետական լինելը մարդու արժեքակերպ է.

«Լուսարձակ» ամկախ շաբաթթերթի խմբագրությունը ՀՀ նախագահական ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերին և նախագահի թեկնածուներին հրավիրում է թերթի էջերում լուսաբանել իրենց նախընտրական ծրագրերը և հայտնել իրենց դիրքորոշումները:

Կլոր սեղան

### ՀԱՆՈՒՆ ԹԵՐԹԻ ՀՉՈՐԱՅՄԱՆԱ

Օրերս «Լուսարձակի» խմբագրությունում անցկացվեց կլոր սեղան-քննարկում «Մարզային տպագիր մամուլի հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» թեմայով: Միջոցառումը կազմակերպվել էր «Եվրասիա» հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Լուսարձակ» շաբաթթերթի հզորացում դրամաշնորհային ծրագրի (Y07-2010) շրջանակներում: Քննարկվեցին «Լուսարձակ» շաբաթթերթի մասին տեղեկատվության տարածման, հասարակական կարծիքի բարելավման, տպագիր մամուլի նկատմամբ վստահության ամրապնդման խնդիրները: Թեմային վերաբերվող զեկուցումներով հանդես եկան «Լուսարձակ» թերթի գլխավոր խմբագիր Ֆ. Ավուջանյանը և «Թիմ» ՀԿ նախագահ Ա. Դեմուրյանը: Քննարկմանը

### ԱՇԱՆԱԿՅԻՆ ԱՌԱՅԻՆ ՉՈՐԱԿՈՉ

Նոյեմբերի 7-ին, չնայած հորդառատ ամրներին, մարդաշատ էր Սպիտակի զինկոմիտեի անդամների և ուղևորների հարավում: Գուհարի կայագրի կայագրի զինվորական դատախազ Թ. Ն. Միրզաբեկյանը: Նրանք բարենախդանքի խոսքեր ասացին մեկ ժողովուրդ: Իսկ նորակոչված կրտսեր Հովհաննիսյանի պատգամը՝ Բորիս Հովհաննիսյանը, քաջալերեց բոլորին՝ նշելով, որ լավ ծառայությամբ պիտի ապացուցեն իրենց սերը հայրենիքի ու ծնողների հանդեպ:

### Ուշադրություն

«Լուսարձակ» շաբաթթերթի գլխավոր խմբագիր Ֆահրադ Ավուջանյանի կողմից գրված է Արևաշող գյուղի 180-ամյա պատմությունը, որտեղ վավերագրվել է գյուղի անցած պատմական ուղին, տնտեսական, մշակութային, կենցաղային և էթնոգրաֆիական-ժողովրդագրական նվաճումները: Տրվել է պատմա-աշխարհագրական ակնարկ, գյուղի տեղավայրերի բացատրությունը, բուսական, կենդանական աշխարհի նկարագրությունը, ինչպես նաև ներկայացվել է գյուղաբնակների տոհմաբանությունը և ժողովրդական բանահյուսությունը:

Հարուստ Ստուդյան	Էջ 2
ՔՈՒՐԱՅՈՒՆ ԵՎ ՄՊԱԿԱՆԱՅՈՒՆՆԵՐԻՆ ՏԵՐԹԻ ՏՏԱԿՈՎ ԸՄՆ-Ը ԳՆՈՒՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՆՈՒՄ ԳՆՈՒՆՈՒՄ	Էջ 2
ՆԸՎԵՑ ՄԵԾ ՀՈՒԲՈՎ	Էջ 3
ԳՂՅՈՒՆ ԵՎ ԵՄԻՍԻՍՈՎ ԳՂՅՈՒՆՆԵՐԻՆ	Էջ 3
«ՄՊԱԿԱՆ» ԶՈՎԱՏԻ ՏՐԱԿԻՍՏ ՄԻՏԻԹ-ԱՐԸ...	Էջ 4

### ՀՀ Ազգային Ժողովուրդ

Ազգային ժողովը հերթական Անհատում համալրեց Աժ փոխնախագահի թափուր պաշտոնը, որն ազատ էր մնացել Իշխան Չաքարյանի՝ վերահսկիչ պալատի նախագահ ընտրվելուց հետո: Ինչպես սպասվում էր, այդ պաշտոնում առաջադրվեց և 79 կողմ, 13 դեմ փակ զարդան քվեարկությամբ ընտրվեց «Քարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Արևիկ Պետրոսյանը: Սա առաջին դեպքն է, երբ Ազգային ժողովի ղեկավարության կազմում ընտրվում է կին:

### ՀՀ Ազգային Ժողովում

Ազգային ժողովում նոյեմբերի 12-15-ի քառօրյա նիստն սկսվեց օրակարգերի և Աժ որոշումների հաստատումով, որից հետո պատգամավորները շարունակեցին քննարկել նախորդ քառօրյայում ընդհատված օրինագծերը: Նոյեմբերի 13-ին Աժ-ն ձեռնամուխ եղավ օրակարգային հարցով՝ «ՀՀ 2008 թ. պետական բյուջեի մասին» օրենքի նախագծի քննարկմանը: ՀՀ 2008թ. պետական բյուջեի քաղաքականությանը, հիմնական ուղղություններն ու ծրագրված բարեփոխումները ներկայացրեց ՀՀ վարչապետ Սեթ Սարգսյանը:

Ըստ կանխատեսումների՝ համախմբված բյուջեն եկամուտների գծով կկազմի 766,9 մլրդ. դրամ, ծախսերի գծով՝ 842,9 մլրդ դրամ, դեֆիցիտը կկազմի 76,0 մլրդ դրամ: Համայնքների բյուջեները եկամուտների գծով կկազմեն 46,8 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 46,8 մլրդ դրամ: Աժ նոյեմբերի 14 -15-ին շարունակեց 2008 թ. պետական բյուջեի նախագծի քննարկումները: Խորհրդարանական քառօրյայի երկրորդ և երրորդ օրերի աշխատանքները, ինչպես նախատեսում է Աժ կանոնակարգը, եզրափակվեց հայտարարություններով և պատգամավորների ու կառավարության անդամների միջև հարցուպատասխանով:

### Սեփական լրատվություն

Հոկտեմբերի 29-ի դրությամբ Սևանա լիճը ծովի մակերևույթից գտնվում է 1898,80 մետր բարձրության վրա, ինչը նախորդ տարվա նույն օրվա համեմատ բարձր է 46 սմ-ով:

Խմբագրության հասցեն՝ Ք. Սպիտակ, Ա. Ավետիսյան 7/23 Դեռ. 2 - 30 - 38







